ՊԱՏՄԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻ ՇԱՐՔ ԳՅՈՒՂԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հնագույն վայրերի տեղադրության հարցը կարևոր նշանակություն ունի Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար։ Ներկա հոդվածում, պատմահնագիտական հետազոտությունների հիման վրա, փորձ է արվում լուսաբանել և հնարավորին չափ ճշտել հին Հայաստանի խոշորագույն նահանգներից մեկի՝ Սյունիքի մի շարք բնակավայրերի տեղադրությունը, մասնավորապես այնպիսիներինը, որոնք հիշատակված են XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հանրահայտ «Հարկացուցակ»-ում։ Եվ քանի որ «...չիք ի դիտութիւնս փոփոխական քան դաշխարհագրութիւն և դժուարին ի ճշտել և ճշգրտել զրնական և զրնակչական...»[1], մենք ստիպված էինք տեղավայրերում շրջագայելիս ըստ հնարավորին դրանցել կոնկրետ բնակավայրի շրջակայքում գտնվող բոլոր գյուղատեղիները, եկեղեցիները, գերեզմանոցները, ինչպես նաև ժողովրդի մեջ պահպանված ավանդությունները, գրույցները և այլն։ Շրջագայելիս տեղերում մեզ սիրով աջակցել և օգնել են Ա. Մուրադյանը, Ս. Եղիազարյանը (Սիսիան), Ա. Ծատուրյանը, Հղ. Աղամիրյանը (Ղափան) և շատ ուրիշներ, որոնց հայտնում ենք մեր սրտագին շնորհակալությունը։

Ագատի.— Ըստ Ստ. Օրբելյանի «Հարկացուցակ»-ի այս բնակավայրը մտել է Բաղք-Քաշունիքի մեջ։ Հետագայում հիշատակվում է Բարգուշատի գավառի մեջ[2], եղել է միջին մեծության գյուղ, Սյունյաց եպիսկոպոսական աթոռին վճարել է 8 դահեկան հարկ[3]։ Մենք կարծում ենք, որ Ագատին (Ագատի ադրբեջ. արտասանվում է՝ Այադի) եղել է ներկայիս Ղափանի շրջանի Եղվարդ (նախկին Աղահորդ) գյուղի հանդիպակաց սարի վրա գտնվող Այադին, որը մտնում է Ադրբ. ՍՍՀ-ի մեջ։ Ներկայումս բնակիչներն ադրբեջանցիներ են։

Աւելագաշտ-բերդ.— Ավելագաշտի տեղադրության ճշտումը ավելի կարևոր է, քանի որ այս գյուղը եղել է Տաթևի վանահայրերի դեմ ապստամբած գյուղացիների օջախներից մեկը։ «Բերդ» անունով բնակավայր Ստեփանոս Օրբելյանը մեկ անգամ հիշատակում է իր «Պատմութեան» 127 էջում (Մոսկվա, 1861), որը սակայն բոլորովին չի համապատասխանում բերդ-Ավելագաշտին, որովհետև Սյունյաց Աշոտ իշխանաց իշխանը 874 թ. այն նվիրում է Սևանա վանքին։ Մեզ հետաքրքրող բերդ-Ավելագաշտը գտնվում է Տաթևի վանքի շրջակայքում։ «Էր և ավազականոց մի Բերդ անուն հանդէպ վանիցն, յայնկոյս մեծի գետոյն,— գրում է պատմիչը,— յափն քարին որ Ավելագաշտն (այլ օր. Առաւելագաշտ) կոչեն, ի ներքին Ուսակին՝ և զայն ևս ոչ հալածեցին, յորոյ վտանգ ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն»[4]։ Ինչպես տեսնում ենք մատենագրի վկայությունից, մեզ հետաքրքրող բնակավայրը գտնվելիս է եղել «հանդէպ վանիցն, յայնկոյս մեծի գետոյն յափն քարին»։ Պարզվում է, որ Ավելագաշտը եղել է Տաթևի վանքի դիմաց, Ուսակ կոչված վայրից ներքև, Որոտան գետի ձախ ափին։ Ստ. Օրբելյանի նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ Ավելագաշտը եղած պետք է լինի Տաթևի վանքի հարավ-արևելյան կողմում գտ-

---

1 Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ Զ (Առաջաբան)։

2 Մատենադարան, ձեռ. N 2924, թ. 153։

3 Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությանը կցված «Սիւնեաց հրկոտասան գաւառաց հարկք եկեղեցւոյ» կամ ինչպես կարճ անվանում են՝ «Հարկացուցակ»-ի առեղծվածը այժմ կարելի է լուծված համարել։ Մենք ընդունում ենք Մ. Սմբատյանցի (Տեղագիր Գեղարքունի ծովազարդ Գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 97), Հ. Ութմազյանի (Սյունիքը IX—X դարերում, Երևան, 1958, էջ 238) և Ս. Հակոբյանի (Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, էջ 392, հատ. 2, էջ 180, Երևան, 1964) տեսակետները, որ «Հարկացուցակ»-ի գյուղերի դիմաց նշանակված թվերը դրամական միավորներ են։

4 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, էջ 168, Մոսկվա, 1861։

նրվող Տաշտ (Դաշտ) անունով վայրին կից, այժմյան Մոսունց սեռ կոչվող քարափի վրա, որտեղ կան հին գյուղատեղի հետքեր։ Ի դեպ, հայ պատմագիտական գրականության մեջ ընդունված է նույնացնել կամ տարբերել բերդ և Ավելադաշտ անունները։ Մեզ թվում է, որ Օրբելյանի գրքում նշված բերդը հատուկ անուն չէ, այլ պարզապես գործածված է ամրոց-բերդ իմաստով։ Ինչպես, օրինակ, ասվում է «Ձուր» և «բերդն Ձուրայ», «քարն Ձուրայ» կամ ուղղակի Ձուրաբերդ. այդպես էլ պետք է հասկանալ «բերդ-Ավելադաշտ»։ Օրբելյանից կատարած մեջբերումը հաստատում է մեր ենթադրությունը։ Իսկ նույն հատվածում եղած Ուսակ անունը դեռևս մնում է անվերծանելի[5]։

Արիտ.— Այս գյուղը Ստ. Օրբելյանի «Հարկացուցակ»-ում գետեղված է Ծղուկ գավառի մեջ և Տաթևի վանքին եկեղեցական հարկ է վճարել 6 դահեկանի չափով։ Հենց հարկի չափից էլ կարելի է եզրակացնել, որ Արիտը եղել է փոքր գյուղ։ Ուշագրավ է Հովհաննես եպիսկոպոսի վկայությունը՝ «Տան և Ստեփաննոսը զԱրիտ գիւղ սահմանակից Հարժլից (Յայջի — Գ. Գ.) և Տամալեկուց»[6]։ Ըստ պատմիչի հաղորդման Արիտը գտնվում է Հարժիքի և Տամալեկի մոտ։ Կարծում ենք, որ Արիտ գյուղը գտնվելիս է եղել Տաթև գյուղից կարճ ճանապարհով դեպի Յայջի տանող հանդիպակաց սարալանջի վրա, Ածի հողեր վայրում, որտեղ կան հին գյուղատեղի հետքեր։

Արուքս.— Այս գյուղը, որ հիմա ավերակ է, գտնվելիս է եղել այժմյան Ղափանի շրջանի Բեխ գյուղի դիմաց, Ղաթարի հողամասում։ Այս ենթադրությունը հաստատվում է հետևյալ փաստերով. Սյունյաց Սահակ իշխանի որդի Ջևանշերը 871 թ. Սողոմոն եպիսկոպոսի հետ համաձայնվում է փոխանակել իր սեփական Արուքս գյուղը, որը գտնվում էր Բաղքում, Կովսականի գավառում, Տաթևի սեփականությունը կազմող Բեխի հետ. «Վասն զի մեր երկոցունս միջաւոր էր՝ փոխանակեցաք»,— գրում են նրանք։ Ահա Արուքս գյուղի սահմանները, որոնք որոշում է Ստ. Օրբելյանը. 1. Արևելյան կողմից Արուքսը սահմանակից է Կշմաստուկին[8]. 2. Արևմուտքից՝ ս. Խաչի սահմանն է. 3. Հարավից՝ հին ջրագնացով[9] մինչև Բեխի սահմանը. 4. Հյուսիսից Կավարտն է։ Արուքսի տեղի որոշման գործը հեշտանում է նրանով, որ այժմյան Բեխ և Կավարտ[10] գյուղերը գտնվում են նույն վայրերում, որոնց մասին ասում է պատմիչը։ Այսպիսով, Արուքսը նույն Ղաթարի տերիտորիայում է եղել։ «Լենհանքեր» գնացող այժմյան խճուղին անցնում է պատմական Արուքսի միջով։ Սարալանջին կանգուն մնացել է մի թաղածածկ անշուք եկեղեցի, թեև նոր շրջանի, սակայն պատերի մեջ ագուցված են հնագույն խաչքարեր, որոնցից կարելի է կռահել Արուքսի հնավայր լինելը։ Արուքսի, ինչպես նաև Բեխի եկեղեցական հարկերը եղել են 6-ական դահեկան։

Բեխորուտ.— Միջին մեծության այս գյուղը Ս. Օրբելյանի «Հարկացուցակ»-ում զետեղված է Սյունյաց թագավորության ոստան Ձորք գավառում և մետրոպոլիտին վճարել է 8 դահեկան հարկ։ Վստահությամբ կարելի է ասել, որ սա Քաջարանին սահմանամերձ Փխրուտ բնակավայրն է, որ տեղացիների արտասանությամբ կոչվում է Փախրուտ-Փիրխուտ-Փուրխատ[11]։ Մյուս կողմից, նա հարևան է Փիրղաուղան վայրին։ Մեզ հետաքրքրող գյուղի առթիվ բազմավաստակ Ալիշանը գրել է. «Բուխրուտ այն է Բեխորուտ, հին ցուցակին միակ դեռ Բաղաբերդոյ արդ ծանօթ դրիւքն և անուամբ, և ս. Ստեփանոս եկեղեցաւ. յանուն նորին կոչի և մերձակայ երկայնանիստ լեառն ըստ պատմութեան Ղափանեցւոց»[12]։

Գայլոց վանք.— Մեր ուսումնասիրությունը հիմք է տալիս կարծելու, որ Գայլոց վանքը (այլ. ր. Գայլոնց վանք) գտնվելիս է եղել Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի Կիլեվանց կոչվող դաշտավայրում[13]։ Ունի հին գերեզմանոց և կան գյուղատեղի հետքեր։ Տեղացիները նաև կոչում են «Ղո-

---

5 Ըստ երևույթին, Ուսակը հատուկ անուն չէ և արտահայտում է ուս-բլուր, թումբ, բարձունք իմաստը։

6 Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, Պատմութիւն, էջ 167։

7 Նույն տեղում։

8 Կշմարտուկի մասին առանձին կխոսվի այլ առիթով։

9 Ըստ երևույթին, խոսքը Սխչի գետի մասին է։

10 1964 թ. ապրիլի 15-ին մենք եղանք Կավարտում։ Միակ և արժեքավոր հուշարձանը գյուղի ս. Գևորգ եկեղեցու քանդակազարդ դանդակատունն է, կառուցված 1758 թ.։

11 Խ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Զանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920—1960), Երևան, 1963, էջ 87։

12 Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 283։

13 Մատենադարանի № 2924 ձեռագրում (թերթ 154) նշված է Սիսիանի գավառի մեջ Բռնակոթի, Կիրակոսիկի, Շաքիի, Տոլորսի և այլ գյուղերի հետ միասին որպես Տաթևի վանքին հարկատու գյուղ «Կլվանցւ ձևով։

նախ կյորմագ» — «անհյուրընկալ»։ Մտնում էր Ծղուկ գավառի մեջ և Տաթևի հայրապետանոցին վճարել է 10 դահեկան հարկ։

Խանք.— Ծղուկ գավառի այս բնակավայրը, մեզ թվում է, նախապես կոչվել է Խնաք-Խնոք։ Խանք ձևը սխալ արտագրության հետևանք է։ Եթե այս ենթադրությունն ընդունելի լինի, ապա հապանական է, որ Սիսիանի շրջանի Աշոտավան գյուղի հողամասերից մեկի անվան մեջ մինչև այժմ պահպանված է Խնոք (Խնակ) տեղանունը։ Այս տեղավայրը, որն ունի նաև հին գերեզմանոց, նույն Խանք-Խնաք բնակավայրն է։ Օրբելյանի «Հարկացուցակ»-ից երևում է, որ Խնոքը իր ժամանակին եղել է նշված գավառի մեծ գյուղերից մեկը՝ վճարել է 12 դահեկան հարկ։

Մածարդ.— Սյունյաց դահերեց իշխան Աշոտի կին Շուշանը Տաթևի Պողոս-Պետրոսի եկեղեցու նավակատիրի ժամանակ Սյունիքի հոգևոր կենտրոնին նվիրում է երկու գյուղ «զՄացարդ և զՔարատնիս»[14]։ Նշանակում է մեզ հետաքրքրող Մածարդը 906 թ. սեփականության իրավունքով տրվել է Տաթևի վանքին։ Մինչև վանքին անցնելը Մածարդը եղել է լոկ հարկատու գյուղ՝ 10 դահեկան հարկով։ Համանուն Մացարդ (Մածարդ) գյուղատեղը գտնվում է Տաթևի վանքի արևմտյան կողմում, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա։ Տաթևցիները մինչև օրս էլ այդ վայրը կոչում են Մացարդ։

Մորի.— Եղել է Կովսականի մեծ գյուղերից մեկը։ Եկեղեցական հարկը 12 դահեկան էր։ Գտնվում է Կապան քաղաքից մոտ 35 կմ գեպի հարավ, Շիկահողի մոտ, մտնում է Ադրբ. ՍՍՀ-ի մեջ։ Ադրբեջանցի բնակիչների առոգանությամբ արտասանվում է Սորի և այդպես էլ այժմ կոչվում է։

Կիրակոսիկ.— Գյուղի ծերերի պատմածով Սիսիանի շրջանի այժմյան Աշոտավան գյուղը նախկին Կիրակոսիկն է, որ մտել է Ծղուկ գավառի մեջ։ Եղել է մեծ գյուղերից մեկը, 12 դահեկան հարկով։ Հազար տարի շարունակ սերնդից սերունդ ավանդաբար փոխանցվել է այս անունը, չնայած հետագա դարերում այն կոչվել է Աղքենդ[15]։

Կիցք.— Սյունիքի Զորք գավառի գյուղերից է։ Ղ. Ալիշանը «Սիսական»-ում Կիցքի առթիվ գրում է. «Ըստ նոր ցուցակաց՝ Գեղուաձորոյ վիճակեալ է Կիցք գիւղ հին, որ ի հիշատակարանի միում 1657 կոչի Գեց»[16]։ Դեռ Ալիշանի ժամանակ Կիցքում եղել են երկու եկեղեցիներ՝ ս. Ստեփանոս և ս. Աստվածածին անուններով։ Այժմյան Քիրսը (Կիցք) գտնվում է Կապանից դեպի արևմուտք, մոտ 39 կմ հեռավորության վրա, Գեղիի ճանապարհով Հաչաթի գյուղի կողքին։ Պատմական Կիցքը (Քիրսը) եղել է միջին մեծության գյուղ, Սյունյաց եպիսկոպոսարանին վճարել է 8 դահեկան հարկ։

Կուռափաձորոյ վանք.— Այս վանքի մասին հիշատակված է Ստ. Օրբելյանի «Պատմութեան» 16-ի գլխում[17]։ Տեղանքի մեր ուսումնասիրությունները հիմք են տալիս հաստատելու, որ հիշյալ վանքը գտնվելիս է եղել Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի Կոփաձոր-Կուռափաձոր վայրում, ուր մինչև այժմ մնացել են հին գյուղատեղի և ավերված վանքի հետքերը։ Ի դեպ, այս վանքը հիշատակվում է բուն Սյունիքի վանքերի մեջ։

Կորովի.— Շատ հավանական է, որ այս բնակավայրի անունը (Կրո(վ) ձևով պահպանվել է նույն Բռնակոթ գյուղից դեպի արևմուտք, մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող «Կրոյ»-ի դաշտավայրի անվան մեջ։ Այստեղ կան հին գյուղատեղի հետքեր, խաչքարեր և այլն։ Կրոյի մասին, ի միջի այլոց, հիշատակություն ունի արձանագրագետ Ս. Բարխուդարյանը։ Նա նշում է, որ Կրոյ անունով փոքրիկ եկեղեցու «պատին և մոտիկ գերեզմանաքարի վրա եղել են արձանագրություններ։ Այժմ ոչ եկեղեցին և ոչ էլ գերեզմանաքարերը չկան»[18]։ Ս. Գ. Բարխուդարյանը «Կրոյի» արձանագրությունները «Դիվան»-ում հրատարակել է ըստ Ե. Լալայանի վերծանության (ընդամենը 2 արձանագրություն)։ Կորովի-Կրոյին եպիսկոպոսական աթոռին վճարել է 12 դահեկան։

Մակաղոց և Մակաղոց միւս.— Պատմական Հարանդ գավառի երկու տարբեր գյուղեր են. ընդորում, Մակաղոցը ավելի մեծ է եղել, քան Մյուս Մակաղոցը, որովհետև առաջինը Տաթևի եպիս-

---

14 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, գլ. ԽԱ, էջ 167։

15 Մատենադարանի № 2924 ձեռագրում, թ. 155, գրված է՝ «Կիրակոսիկ, որ է Աղքենդ», Նույն կերպ է գրված № 6271 (թերթ 343) և այլ ձեռագրերում։

16 Ալիշան, Սիսական, էջ 292։ Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. № 2924, թ. 153։

17 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 249։

18 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, 2, էջ 124։ Այստեղ նշված է «Կիոյ» ձևով, որը պարզապես սրբագրական սխալ է. ժողովուրդը այդ վայրը կոչում է «Կրոյ»։

կոպոսարանին վճարել է 10 դահեկան, իսկ երկրորդը՝ 7։ Կարծում ենք, որ այս գյուղերի տեղագրությունը պետք է որոնել Լորահովտում։ Երբ գրանցում էինք Լոր գյուղի հնավայրերն ու հանդամասերը, մեր ուշադրությունը գրավեց Ըրխաջնի կոչվող գյուղատեղին, որը թարգմանությունն է Մակաղող-Մակաղոցներ-ի։

Մաճ.— Մաճ գյուղը մտնում էր Բաղք կամ Քաչունիք գավառի մեջ։ Եկեղեցու հարկը եղել է 7 դահեկան։ Ի դեպ, այս բնակավայրը չպետք է շփոթել այժմյան Գորիսի շրջանի Առաջաձոր գյուղի մոտ եղած Մաճ Ամեռանոցի հետ[19], որը մտել է պատմական Հարանդ գավառի մեջ։ Ուրեմն, անհրաժեշտ է Մաճ գյուղի տեղը որոնել Բաղք գավառում, որովհետև Հրահատ Սյունեցու կին Ջուպդիդուխտը Սյունյաց Սողոմոն եպիսկոպոսի հետ միասին 867 թ. կնքած «պայման-վճռի համաձայն, նահանգի հոգևոր կենտրոնին է նվիրում «և շեն մի Մաճ անուն ի Բաղաց գաւառի»[20]։ Նշանակում է, խոսքը վերաբերում է Բաղքի Մաճին։ Հետաքրքրական է այն, որ Ղափանի շրջանի Մաճ կոչված վայրն էլ գտնվում է նույնպես Առաջաձոր կոչված գյուղի մոտ, Աղվանի (նախկին Խոդվանի) գյուղից ոչ հեռու, ուր մինչև օրս էլ նկատելի են հին գյուղատեղի հետքերը։ Այդ վայրը գյուղացիները կոչում են Մաճ։

Մրուց.— Այս գյուղը Ստ. Օրբելյանի մոտ հիշատակվում է Ծղուկ գավառի մեջ։ Տաթևին վճարել է 8 դահեկան հարկ, որից երևում է միջին մեծության գյուղ լինելը։ Մրուց գյուղը պետք է լինի Սիսիանի շրջանի Շնաթաղ գյուղի այժմյան Մրոց վայրը, որը հին գյուղատեղի է։ Ի դեպ, հետագա դարերում հիշյալ բնակավայրը մտել է Վերին Ծորու գավառի մեջ և հիշատակվում է Լորահովտի գյուղերի՝ Ըղվերձի, Շնաթաղի, Լորի, Լծենի և այլնի հետ միասին[21]։

Շոքար.— Շոքար բնակավայրը Ստ. Օրբելյանը գետեղել է Ծղուկ գավառի հարկացուցակում։ Միջին մեծության երբեմնի այդ գյուղը գտնվելիս է եղել Սիսիանի շրջանի Շաղաթ գյուղի մոտ և մինչև 30-ական թթ. կոչվում էր այդ անունով։ Այժմ ոչ ոք չի ապրում, և գյուղատեղին լոկ հիշվում է որպես Շաղաթի դաշտավայրերից մեկը[22]։ Անգեղակոթցիները արտասանում են Շյոքյուր անով։ Պատմական Շոքարի և այժմյան Շյոքյուրի նույնությունը կասկած չի հարուցում։

Ուչէր.— Այս փոքրիկ գյուղը, որի եկեղեցական հարկը կազմել է ընդամենը 6 դահեկան, նույնպես մտել է Կապանի թագավորության ոստան Զորք գավառի մեջ։ Գտնվում է Ղափանի շրջանի Գեղի գյուղից դեպի արևմուտք՝ մոտավորապես 2 կմ հեռավորության վրա, Քիրսի (Կիցք) մոտ։ Այդ տեղավայրի անունը այժմ ադրբեջանցիները Հուչեթի են արտասանում։

Պետրուսկայ վանք.— Այս տեղանունը, մեզ թվում է, պահպանվել է Տաթև գյուղի հյուսիսային կողմում Խիփեր կոչվող քարքարոտ սարալանջի վրա եղած Պետրուսախաչ վայրի անվան մեջ։ Տաթևի բնակիչները Պետրուսախաչ այժմ կոչում են միայն Խիփերի բարձր գագաթը, որի վրա հավանաբար եղել է «Պետրուսկայ վանքը», իսկ գյուղը եղել է Պետրուսախաչի հարավ-արևմտյան լանջին, որտեղից բխում է նշանավոր Խոզ-աղբյուրը։ Այս բնակավայրը Սյունյաց եպիսկոպոսական աթոռին վճարել է 10 դահեկան հարկ և պահպանվել է Հարանդ գավառի հարկացուցակում։

Տամալեկ.— Տամալեկի տեղադրությունը նույնպես մինչև այժմ որոշված չէ։ Ըստ Ստ. Օրբելյանի, Արիտ գյուղը սահմանակից է եղել Հարժիքին (Գորիսի շրջան, Յայջի գյուղ) և Տամալեկին։ Մատենագիրը իր «Պատմութեան» մեջ ԽԱ գլխում Տամալեկը հիշատակում է Ցուրի և այլ գյուղերի հետ միասին։ Տամալեկցիները ևս ցուրացիների նման «հին հայրենատէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ», «այսպէս և ոչ ղՏամալէկն, որ մերձ վանիցն էր ի հանդէպ, կարացին տեսականել, զի և նոքա նոյնպիսիք էին»[23],— գրում է Սյունյաց նահանգի հոգևոր պետը։ Ստ. Օրբելյանի «Պատմութիւն»-ից մեջբերված այս հատվածից պարզ երևում է, որ Տամալեկը գտնվել է վանքին մոտ («մերձ վանիցն էր»), նույնիսկ հանդիպակաց էր նրան («ի հանդէպ»)։

Տաթև գյուղի շրջակա դաշտավայրերի գրանցումը, ինչպես նաև ուշադիր զննումները, հիմք են տալիս կարծելու, որ վանքից հարավ-արևելք, հանդիպակաց ձորի մյուս կողմում, մոտավորապես 150 մետր հեռավորության վրա գտնվող վայրը նույն Տամալեկն է, որ տեղացիների արտասանությամբ կոչվում է Տամրալակ կամ Տամրաչասկ։ Այդտեղ մինչև օրս էլ մնում են ս. Աստվածածին կոչվող կիսավեր եկեղեցին ու նրա արևելյան պատի մոտ կանգնած խաչքարի՝ XIII դարի վերջերին վերագրվող նվիրատվական արձանագրությունը։ «Այս կիսավեր եկեղեցու և խաչքարի

19 Խ. Ա. Ավետիսյան, Զանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում, էջ 88։
20 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 160։
21 Մատենադարան, ձեռ. № 2924, թ. 154։
22 Խ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 89։
23 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 168։

վայրն,— ասում է Սյունիքի վիմական արձանագրությունների պրակի հրատարակող Ս. Գ. Բարխուդարյանը,— այժմ կոչվում է Տումբալանց»[24]։ Տամալեկ անունով գյուղ Ստ. Օրբելյանի «Հարկացուցակ»-ում չի հիշատակվում։ Այդ բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնց քննությունը սույն հոդվածի նպատակից դուրս է։ Ինչպես մեզ պատմեց Տաթևի բնակիչ Թ. Մարգարյանը[25], ժողովրդի մեջ մինչև օրս ավանդություն է պահպանվել Տամալեկի վերաբերյալ։ Այս գյուղի բնակիչները հաճախակի հարձակվել են Տաթևի վանքի վրա, ծաղրել հոգևորականներին, և իրը վերջիններիս անեծքով գետինը պատռվել է և ապստամբ տամալեկցիները անցել են գետնի տակ։

Տամալեկցիների մասին հիշատակություն կա Մատենադարանի № 2924 ձեռագրում (թերթ 155). «Կէս Տամբալասքէն մինչ ի գետն...» — գրված է հիշյալ ձեռագրին կցած հետագա գարերին վերաբերող հարկացուցակում։

Տաշու.— Տաշուն Սյունիքի ամենափոքր գյուղերից մեկն է եղել, որովհետև Տաթևին վճարել է ընդամենը 5 դահեկան եկեղեցահարկ։ Այս գյուղը չնայած մտել է Մղուկ գավառի մեջ, սակայն 906 թ. Տաթևի եպիսկոպոսարանին նվիրաբերել են Բաղքի իշխանները։ Իհարկե, այս դեպքում Բաղքի իշխանները Տաշուի փոխարեն Աշոտ գահերեցին, որը սեփականությունն էր կազմում այս գյուղը, պետք է տային մի այլ գյուղ, այսինքն կատարվում էր գյուղերի փոխանակում։ Միջնադարում գյուղերի փոխանակումներ էին կատարվում ոչ միայն հոգևոր պետերի ու աշխարհիկ ֆեոդալների, այլև առանձին իշխանների միջև՝ նպատակահարմարությունից ելնելով։ Եպիսկոպոսներն ամեն ջանք գործադրում էին ստանալու համար այնպիսի հատկապես «հոգեցատուր» գյուղեր, որոնք գտնվեին վանքին մոտ։ Հավանաբար այս դեպքում ևս Բաղքի իշխանների և գահերեց Աշոտի միջև կատարված սույն գործարքը եղել է Սյունյաց հոգևոր առաջնորդի թելադրանքով։ Տաշուի տեղադրության կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Տաթևի վանքի հարավ-արևմտյան կողմում, Աղանձու գյուղի[26] կոչված վայրից դեպի հյուսիս Տաշու անվամբ այժմ էլ գոյություն ունի հին գյուղատեղ և գերեզմանոց։ Համոզված ենք, որ պատմական Տաշուն հենց այժմյան Տաշուի տեղում է եղել։

Դեղնաձոր (Տղնաձոր).— Այս բնակավայրի մասին Ստ. Օրբելյանի «Պատմութեան»-ում գրվում հիշատակվում է, որ Աշոտ գահերեց իշխանը մի շարք գյուղերի հետ միասին «շնորհէ և... զՏանձատափ և զԴեղնաձոր»[27]։ Տանձատափը նույն անունով էլ այժմ գոյություն ունի Գորիսի շրջանում։ Այն գտնվում է Տաթևի վանքի արևելյան կողմում և բաժանված է նրանից անդնդախոր ձորով (Ս. Բարխուդարյան, Դիվան, 2, էջ 40)։ Դեղնաձորի տեղադրությունը հնարավոր է որոշել 906 թ. կազմված «Գիր վճռի շրջակայ, սահմանին Տաթևոյ» փաստաթղթի համաձայն։ Այստեղ պատմիչն ավելի հանգամանորեն նկարագրում է Դեղնաձորի տեղը։ Նախ նշենք, որ մեզ հետաքրքրող վայրը հիշատակվում է ինչ-որ կամուրջի հետ՝ «նուրբ, անջուր ձորակովն ի վայր ի դեղնաձորն և ի կարմունջն և ի կարմնջեն ի Քարաձորն»[28]։

Թվում է, թե այստեղ հիշատակված կամուրջը այժմյան «Սատանի կամուրջն» է, որի մոտ եղած դեղնագույն սարից բխում են հանքային գոլ ջրեր։ Տեղում կատարած դիտումները հիմք են տալիս ենթադրելու, որ պատմական Դեղնաձոր բնակավայրը, որն ի միջի այլոց բավական մեծ է եղել, 12 դահեկան հարկով, պետք է եղած լինի Տաթևի վանքի հարավ-արևելյան մասում գտնվող այժմյան Տղնաձոր կոչված վայրը։ Տղնաձոր անունը, ինչպես համոզիչ փաստերով ապացուցեցին բնիկ տաթևցիները, առաջացել է հիշյալ տեղում եղած նստվածքային դեղին ծծմբաքարերի առկայությունից։

Ցաքուտ.— Սյունյաց եպիսկոպոս Հակոբը 932 թ. «Վասակայ Սիւնեաց իշխանի» որդի Փիլիպեից 1200 դրամով և մեկ թանկագին գոհարով գնում է Զագեձորի ջուրը, բերում է «ի Ցաքուտն.

---

24 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, 2, էջ 33։

25 Առիթից օգտվելով, խորին շնորհակալություն ենք հայտնում Թ. Մարգարյանին՝ իր չափազանց արժեքավոր տվյալների և ցույց տված աջակցության համար։

26 Տաթևի գյուղացիների մեջ պահպանված ավանդության համաձայն մեզ անհայտ խանը տեղի բնակիչներից պահանջել է չորացրած հաղարսի տուրք, սակայն նրանք հրաժարվել են բրոնակալի կամքը կատարելուց և հեռացել են իրենց բնակավայրից՝ հարկահավաքներին ոչնչացնելուց հետո։ Աղանձուի մասին հիշատակություն կա Մատենադարանի № 2924 ձեռագրում, թ. 154։

27 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 167։ Մ. Էմինի 1861 թ. հրատարակած բնագրում գրված է «Դեղձակոթն», իսկ փարիզյան (1859) հրատարակության մեջ՝ Դեղձաձորն, որոնք սխալ են։ 1861 թ. հրատարակության մեջ, 189 էջում, շտկվում է՝ Դեղնաձոր։

28 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 169։

որ հանդէպ վանքին յայնկոյս գետոյն և սրար դամենայն առապար և փշալից վայրն վարդուտ և տնկալից»29։ Ինչպես տեսնում ենք մեջբերված հատվածից, Ցաքուտը գտնվել է Տաթևի վանքին հանդիպակաց. գետի մյուս կողմում. նվ իսկապես, այս հանդամասը մինչև այժմ էլ տաթևցիները անվանում են Ցաքուտ։ Այն գտնվում է «Տաթևավանքի հյուսիսում, Որոտանի ձախ ափին»30, «Սատանի կամուրջի գլխին»31։ Ցաքուտը ջրարբի դարձնելուց հետո կոչվել է նաև Վարդուտ։ Ցաքուտը բնակավայր չի եղել, հետևաբար Ստ. Օրբելյանի հարկացուցակում չպետք է արտացոլվեր։ Այդ վայրում տարածված էին եպիսկոպոսարանի ընդարձակ կալվածներն ու այգիները, որոնք շրջակա գյուղերի բնակիչների կողմից մշակվում էին «ի վայելումն եղբայրութեանն»32։ Ցաքուտն ունեցել է «բաղդր դիտանոց»-պահակակետեր, որտեղից պահակները գիշեր ու գոր հսկում էին վանական կալվածներն ու այգիները։ Գյուղատնտեսական սեզոնների ժամանակ. ինչպես պատմեցին Տաթևի կոլտնտեսականները, այս վայրում հաճախակի հայտնաբերվել են կավից պատրաստած խողովակներ — «քյունգերք», որոնք, թվում է, Վարարակի հայտնի ջրանցքի մնացորդներն են։

Ցուր-Ցուրաբերդ.— Այս շատ նշանավոր բնակավայրի տեղը ևս առայժմ վերջնականապես որոշված չէ։ Հիմք ընդունելով Ստ. Օրբելյանի վկայությունը, պատմաբանները33 սոսկ հիշատակում են, որ Տաթևի շրջակայքում է գտնվել այդ դյուղը։ Ոմանք նույնիսկ ենթադրում են, թե պատմական Ցուրը այժմյան Սվարանց գյուղն է։ Արձանագրագետ-պատմաբան Ս. Բարխուդարյանի կարծիքով՝ «ինչպես այդ վայրի անունը «Սվարանց», այնպես էլ մեջբերված34 արձանագրությունների մեջ հիշատակվող «Ցուրահող», տեղանունը ապացույց են, որ գյուղի (իմա՝ Տանձատափի — Գ. Գ.) մոտակայքում պիտի լիներ նշանավոր Ցուրա բերդը»։ Սակայն նա եզրակացնում է, որ «Հնում հիշատակված և այժմ էլ գոյություն ունեցող Սվարանց գյուղի նույնացումը Ցուր-Ցուրաբերդի հետ հավանական չէ»35։

Ցուր գյուղի տեղադրության հարցում կարելի է անել երկու հավանական ենթադրություն. 1) Ցուրը Սվարանց գյուղն է, 2) Ցուրը եղել է Պղապերթ կոչվող վայրում։

Առաջին ենթադրությունը հիմնավորելու համար դիմելու ենք հատկապես լեզվական վերլուծության։ Ինչպես հայտնի է, Ց-ն բարդ հնչյուն է (աֆրիկատ), որը տարրալուծվելով՝ հնչյունությամբ վերածվում է ք և ս բաղադրիչների (հմմտ. վացուն-վաքսուն). Հետևաբար, Ցուրը հնչել է սուր. իսկ հանրահայտ է. որ ու հնչյունը նախապես արտասանվել է ՕՍ։ Ստացվում է սուր. հետագայում սա արտաբերվել է սուար ձևով։ Սուարի բնակիչները կոչվել են սուարանք, այսինքն «վարցիներ։ Բառաթեքման դեպքում սուարանքը դառնում է սուարանց։ Լեզվական օրինաչափություն է. որ ուա երկբարբառը վերածվում է վա-ի (հմմտ. հատուած-հատված, հարուած-հարված և այլն)։ Եթե մեր կողմից առաջարկված Ցուր-Սվարանցի մեկնաբանությունը ընդունելի լինի, հետևաբար, որոշվում է պատմական Ցուրի վայրը, այսինքն Ցուրը այժմյան Սվարանցն է։

Երկրորդ ենթադրությունը կարելի է հիմնավորել հետևյալ փաստերով. Տաթև գյուղի հարավային կողմում, վանքից ոչ հեռու Թախտորդ կոչված հողամասին կից այժմ էլ գոյություն ունի մի հնավայր, որը տեղացիների արտասանությամբ անվանվում է Պղապերթ, այսինքն, բողերի բերդ։ Հիշենք, որ Սյունյաց մետրոպոլիտը Ցուրի բնակիչներին համարում էր «անաստուածք, հպիրհք, և ելուզակք»36, «շնարարոյք»37 և այլն։ Ժողովրդի մեջ մինչև օրս էլ պահպանվել է մի ավանդություն, ըստ որի պղապերթցիները հարձակվել են Տաթևի վանքի վրա, սպանել են եպիսկոպոսին, ոչնչացրել կրոնավորներին, իսկ եկեղեցու հայրերը այդ վայրում ապրող գյուղացիներին «ավազակ պղապերթցիներ» են կոչել և սարսափելի անեծքներ տեղացել նրանց գլխին։ Ինչպես տեսնում ենք, այս ավանդությունը սերտորեն առնչվում է այն պատմական իրողությանը, որ Ստ.

29 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 169։

30 Ս. Բարխուդարյան, Դիվան, 2, էջ 239։

31 Նույն տեղում։

32 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 185։

33 Թ. Խ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, էջ 204, Երևան, 1960։ Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 216, Երևան, 1960։ Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. 2, էջ 254։

34 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 2, № 96 արձանագրությունը։

35 Նույն տեղում, էջ 40։

36 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 180—181։

37 Նույն տեղում, էջ 183։

Օրբելյանը հանգամանորեն նկարագրել է Ցուրի վերաբերյալ իր «Պատմութեան» Խէ գլխում։ Այսպիսով մեր երկրորդ ենթադրությունն այն է, որ Ցուր-Ցուրարերդը գտնվելիս է եղել այժմյան Պղասերթ վայրում։

Փոքր ույծ (Փոքր ույծ).— Սիսիանի շրջկենտրոնից ընդամենը 2 կմ հեռավորության վրա. այժմյան օղանավակայանի կողքին, որտեղ դեռևս աչ ափին է գտնվում պատմական Ույծ (Ույծ) բնակավայրը, որ այժմ հայտնի է Ուղ անունով։ Փոքր Ույծ անունը ենթադրել է տալիս, որ նախկինում եղել է նաև Մեծ Ույծ. կարծում ենք, որ այս Փոքր Ույծը պետք է եղած լինի այժմյան Ուղից 2,5—3 կմ հեռավորությամբ դեպի հյուսիս-արևելք, ներկայիս Աղուդի (Աղիտու) գյուղի դիմաց. Որտանի աչ ափին գտնվող «Հանապատ» կոչվող վայրում, ուր այժմ էլ կան հնադարյան եկեղեցու ավերակներն ու ընդարձակ գերեզմանոցը[38]։ Մեծ Ույծը ներկայիս Ուղն է։ Թեև գյուղական եկեղեցին կառուցված է 1617 թ., սակայն պատերի մեջ ագուցված խաչքարերը շատ հին են, իսկ գյուղամիջի մեծ բլրի վրա եղած գերեզմանոցի տապանաքարերը, մասնավորապես այնպիսիները, որոնց վրա գրերի նշույլ անգամ չկա, դցված են անհիշելի ժամանակներից։ Ույծը Սյունյաց Բարիկ իշխանի օրոր եղել է գյուղաքաղաք-ավան։ Սյունյաց տոհմական պատմիչ Ստ. Օրբելյանը «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության ԺԱ գլխում նշում է, թե ինչպես Սյունյաց Հովակիմ եպիսկոպոսի ժամանակ մեծ վեճ է առաջանում «Վասն նախագահ նախասութեամբ նախապատիւ լինելոյ գյուղաքաղաք աւանացն...»[39]։ Շաղաթից հետո ույծեցիներն ուզում էին իրենք լինել երկրորդը։ Ընդ որում, Ույծի Փանոս կրոնավորը ամեն կերպ ձգտում էր հասնել այդ նպատակին։ Այդ նախագահության համար «ընդ Ույծ և ընդ Աղիտու (Աղուդի) սաստիկ հակառակութիւն եղև»[40]։

Վերջապես ույծեցիներին տրվում է հինգերորդ գահը[41]։ Փիլիպե իշխանի և Սյունյաց Դավիթ եպիսկոպոսի միջև 844 թ. կնքած «Գիր-վճռի» տակ որպես վկա ստորագրում է նաև «Յակոբ Ույծայ սուագերէց»[42], իսկ Հրահատ Սյունեցու «Նամակ վճռի» մեջ՝ նույն Հակորի որդի Մաթուսաղան[43]։

Եզրափակելով՝ հարկ ենք համարում նշել, որ Փոքր Ույծը դեռևս Ստ. Օրբելյանի «Հարկացուցակ»-ը կազմելու ժամանակ վարչա-տերիտորիալ առումով բաժանված է եղել Մեծ Ույծից և, որպես առանձին «շէն»-գյուղ, եպիսկոպոսարանին վճարել է 8 դահեկան հարկ։

Բոլորաքար (Պլուրաքար).— Տաթևի վանքից հյուսիս-արևմուտք, մոտ 1 կմ հեռավորությամբ. հանդիպակաց բլուրի վրա մինչև այժմ գոյություն ունի մի հին գյուղատեղի, որ տաթևցիների արտաբերությամբ կոչվում է Պլուրաքար։ Տեղում կատարված զննումները, ինչպես նաև Պլուրաքար անունը բավարար հիմք են տալիս կարծելու, որ դա պատմական Բոլորաքարն է։ Ստ. Օրբելյանի «Հարկացուցակ»-ում Բոլորաքար անունով բնակավայր չի նշված, սակայն պատմիչը նրա մասին հիշատակում է անթվական մի վավերագրում, որից բերում ենք մի հատված.

«Յանուն Աստուծոյ այս իմ ձեռին գիր է Փարաջոյ՝ որդւոյ Զագկայ իշխանի, որ կարդացաք զառաջնոց գիրն և վերստին հաստատեցաք զԲոլորաքարն իւր սահմանօքն, որ էր իմ սեպհական տառանգութիւն՝ ի Տաթևոյ սուրբ եկեղեցիքս և ի տէր Գրիգոր. զի յառաջ նոցա հաստատած հայրենիք էր՝ և սակաւ ժամանակօք հեռացեալ էր վասն խանգարման եպիսկոպոսացն. մեք վերստին հաստատեցաք զնոյն՝ այգւով և ծառով և տնկով, հողով և ջրով ի Տաթևոյ սուրբ մայրաքաղաքս, թ սուրբ նշանս և ի սուրբ առաքեալս, ի ձեռն տեառն Գրիգորի Սիւնեաց եպիսկոպոսի»[44]։

---

38 1964 թ. գարնանը ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության սեկտորի վարիչ Ս. Գ. Բարխուդարյանի հանձնարարությամբ ուսումնասիրեցինք Ուղ գյուղի շրջակայքում եղած պատմական հուշարձանները. հավաքեցինք մեկ տասնյակից ավելի վիմական արձանագրություններ, որոնք վերաբերում են XIV—XVII դարերին։ Ուղի գերեզմանոցում (Սանգյարի գերեզմանոց) հատկապես աչքի են ընկնում XVI—XVII դարերի տաղանդավոր քարգործ վարպետներ՝ կազմողներ Բախշայիճի ու Ղարտաշի նրբակերտ տապանաքարերը. 1574 թ. մի տապանաքարի վրա փորագրել էր Սիմավոն գրիչը։

39 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 33։

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում, էջ 34։

42 Նույն տեղում, էջ 152։

43 Նույն տեղում, էջ 153։

44 Նույն տեղում, էջ 215։ Վավերագիրը հաստատված է Վասակ Սյունյաց թագավորի և Գրիգոր եպիսկոպոսի կողմից։

Ինչպես պարզ երևում է սույն հատվածից, Բաղքի Զաղիկ II-ի որդի իշխանազն Փարաջը[45], կարդալով «զառաջնոց դիրը», իր «հայրենիքը» դարձած Բոլորաքարը «հոգեցատուր» է անում նրա նախկին տերերին՝ Տաթևի եպիսկոպոսարանին։ Հետաքրքիրն այն է, որ Բոլորաքարում իր հողաբաժինն է ունեցել նաև «Նորեաց վանքը», ուստի կալվածագրի մեջ հատուկ նշվում է, թե Տաթևի վանքը կարող է սեփականել այդ վայրի բոլոր հողակտորները, «բաց ի Նորեաց վանից բաժնոյն»[46],

45 Զարմանալի է, որ հիշյալ Փարաջը տեղ չի գտել Սյունյաց իշխանական տոհմածառի և ոչ մի ճյուղում։

46 Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 215։